ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԻՆԵԼ ԳԱԳԻԿԻ

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ժ. 01. 02 «Նորագույն շրջանի հայ գրականություն»
մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարտին Գարեգինի Գիլավյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հովիկ Գաստելլոյի Մուսայելյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Արշակի Աղաբաբյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի դեկտեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. նոյեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. Մարգարյան

Ուսումնասիրության համառոտ բնութագիրը

Բանաստեղծի ստեղծագործական ուղին ժամանակի գրական զարգացումների համապատկերում ներկայացնելու համար այն պայմանականորեն բաժանել ենք երկու շրջանի՝ 1970-1980-ական («Բանաստեղծություններ» (1973), «Թռչուններ» (1978), «Մեր սիրո երկիրը» (1983)), և 1990-2000-ական թվականներ («Շարակնոց» (1997), «Ժամերգություն» (2001), «Սիրո շղթա» (2003), «Արգելված պտուղը» (2005) և մանկական բանաստեղծություններ՝ «Սկյուռիկ թագավորը»(1976), «Հեքիաթասաց սունկը» (1988), «Նկարիչ արևը» (2004)):

1970-1980-ական թվականները ներկայացրել ենք որպես որոնումների առաջին հանգրվան, երբ բանաստեղծը «հոգևոր սնունդ» է որոնում Նարեկացու, միջնադարյան տաղերգուների, դասական պոեզիայի ակունքներում, ինչպես նաև համաշխարհային գրականության դասականների ու ժամանակակից բանաստեղծների ստեղծագործություններում:

1990-2000-ական թվականների բանաստեղծությունները, որոնք տարբեր ժողովածուներում զետեղված են առանձին շարքերով, համախմբել ենք գաղափարագեղագիտական առանցքների շուրջ՝ նշանակետում ունենալով «Ժամերգություն» ժողովածուն. «Այս գրքի առանձին բանաստեղծություններն ու շարքերը միավորողը ես եմ՝ իմ գրական ճանապարհի սկզբում, մեջտեղում և հիմա, դրա համար էլ բանաստեղծությունները չեմ թվագրել, որ վաղեմության շղարշն իսպառ բացակայի, և ինչ-որ տեղ կանգ չառնի, չընդհատվի ընթերցողի մասնակցությունը պոեզիայի ընդհանուր ժամերգությանը»:

Երկրորդ շրջանի բանաստեղծությունները համախմբելով գաղափարագեղագիտական առանցքների շուրջ՝ փորձել ենք ներկայացնել բանաստեղծի հասունացման, կայացման ընթացքը, բացահայտել նրա աշխարհայեցողության սկզբունքները, որոնք պայմանավորված են ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև իր բանաստեղծական դավանանքին հավատարիմ մնալու հանգամանքներով:

Գաղափարագեղագիտական առանցքների շուրջ համախմբումը հնարավորություն է տալիս նաև բացահայտելու Ա. Մար-

տիրոսյանի բանաստեղծական համակարգի պոետիկայի յուրահատկությունները, ինչը «ընթերցողին թույլ կտա ժամանակի միջով ազատորեն ետ ու առաջ քայլել, տողերի միջից տեսնել, թե ինչպիսի՞ն էր, ասենք, Արմեն Մարտիրոսյանը 30-40 տարի առաջ, ուսուցման ինչպիսի՞ սանդուղքներով է ընթացել և ո՞ւր է հասել»[1]:

1990-2000-ական թվականները ներկայացրել ենք որպես հասունացման ու կայացման, բանաստեղծության սեփական մոդելի ամբողջացման շրջան: Ժողովածուից ժողովածու, շարքից շարք Ա.Մարտիրոսյանի ստեղծագործություններում ավելի լիարժեք կերպով է տրոփում խոհափիլիսոփայական երակը՝ շաղախված ջերմ ու անմիջական քնարականությամբ, ավելի են խտանում գույները, հարստանում թարմ նրբերանգներով: Իր քնարական հերոսին Ա.Մարտիրոսյանը մերթ ներկայացնում է «ներկայում հանգրվանող անցյալում», մերթ Անհունի ճանապարհին, մերթ առօրյա հոգսերի ու մտահոգությունների, դրամատիկ ապրումների շրջանակներում:

Ժամանակի տարբեր չափումներում բանաստեղծը որոնում է դեպի Արքայություն գնացող անհատին, ապա տեղափոխվում իր երազած մոլորակը, ուր «սերն է համասփյուռ», և ներդաշնակ են միմյանց հետ մարդն ու բնությունը: Այդ մոլորակում տեղ չունեն երկրի «նորօրյա տերերը», որոնք իրենց մեղքերը քավելու համար եկեղեցիներ են կառուցում, «ապաշխարանքի» խոսքեր են հղում Աստծուն:

Երկրորդ շրջանի ժողովածուներն աչքի են ընկնում ժանրային բազմազանությամբ: Առանձնապես ուշագրավ են «Շարակնոց» շարքի բանաստեղծությունները: Ավանդական ժանրի կառուցվածքային հիմքի վրա Ա. Մարտիրոսյանը ընդլայնում է շարականի թեմատիկ ընդգրկումների շրջանակը, ներկայացնում ժամանակակից անհատին:

Ուսումնասիրության առարկան

«Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» ուսումնասիրության առարկան բանաստեղծի ժողովածուներն են,

---

[1]Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանող անցյալ, Եր., ՀԳՄ հրտ., 2010, էջ 189:

1960-ականների բանաստեղծներին նվիրված ուսումնասիրությունները, ատենախոսությունները, հոդվածները, որոնք համառոտ անդրադարձել են նաև Ա. Մարտիրոսյանի բանաստեղծություններին:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը. «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» ուսումնասիրությունը, անշուշտ, հեղինակի ստեղծագործության արժևորման առաջին փորձը չէ: Նրա ժողովածուների վերաբերյալ գրվել են հոդվածներ, արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք, սակայն, չեն կարող ամբողջական պատկերացում տալ Ա.Մարտիրոսյանի գրական ժառանգության վերաբերյալ, բացահայտել նրա պատկերաստեղծման ու կերպարակերտման յուրահատկությունները, պոետիկայի բնորոշ կողմերը:

Թեմայի արդիականությունը, ուսումնասիրության գիտական նորույթը. Թեման արդիական է այն առումով, որ ընդհանուր պատկերացում կարող է տալ ինչպես Ա. Մարտիրոսյանի, այնպես էլ 1960-1980-ականներին գրականություն եկած բանաստեղծների մասին:

Գիտական նորույթն այն է, որ արժանին մատուցելով բանաստեղծի առանձին ժողովածուների, շարքերի վերաբերյալ գրախոսականներով, դիտարկումներով հանդես եկած գրականագետներին՝ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել բանաստեղծի որոնումների, հասունացման, կայացման ընթացքը, նրա բանաստեղծական ժառանգությունը քննաբանել որպես առանձին համակարգ, հանգել տեսական եզրակացությունների:

Ուսումնասիրության մեթոդական հիմքերը.Ուսումնասիրության ընթացքում, դիմելով մի շարք ***մեթոդների (կենսագրական, համեմատական, վերլուծական*** և այլն), Ա. Մարտիրոսյանի պոեզիան փորձել ենք ներկայացնել որպես առանձին համակարգ, բացահայտել նրա տեղը XX դարակեսի գրական-գեղարվեստական զարգացումների համապատկերում:

Ատենախոսության մեջ առաջադրված ***խնդիրներն ու նպատակը, տեսական հիմնադրույթները*** փորձել ենք ներկայացնել ու քննության առնել արդի գրականագիտական մտքի ընդհանուր համապատկերում, բնագրերի ընթերցման ժամանակակից մեթոդներով վեր հանել ու արժևորել բանաստեղծության մարտիրոսյանական կառույցի յուրահատկությունները:

Գործնական նշանակությունը. Ուսումնասիրությունն օգտակար կարող է լինել մագիստրոսական հատուկ դասընթացների («1960-ականների սերնդի պոեզիան», «Ա. Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը») կազմակերպման, ուսուցիչների, ընդհանրապես՝ 1960-ականների սերնդի, մասնավորապես՝ Ա.Մարտիրոսյանի ստեղծագործությամբ հետաքրքրվողների համար:

Ուսումնասիրության փորձաշրջանը. Աշխատանքը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՊՄՀ Վ.Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն շրջանի գրականության ամբիոնի կողմից:

Այն Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի խորհրդի կողմից երաշխավորվել և տպագրվել է առանձին գրքով: Աշխատանքի առանձին դրույթները հրապարակվել են ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում:

Ուսումնասիրության կառուցվածքը. Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացրել ենք ուսումնասիրության համառոտ բնութագիրը, տեսական-մեթոդական հիմքերը, մշակվածության աստիճանը, նպատակներն ու խնդիրները, արդիականությունը, գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Որոնումների առաջին հանգրվանում», անդրադարձել ենք Ա. Մարտիրոսյանի 1960-80-ական թվականներին գրված բանաստեղծություններին, որոնք զետեղված են «Բանաստեղծություններ» (1973), «Թռչուններ» (1978), «Մեր սիրո երկիրը» (1983) ժողովածուներում:

«Բանաստեղծություններ» ժողովածուն Ա. Մարտիրոսյանի որոնումների առաջին հանգրվանն է, որտեղ հեղինակը «վարպետության դասեր» է առնում դասականներից, փորձում ճշգրտել կողմնորոշման չափանիշները, ուրվագծել բանաստեղծության իր մոդելը: Որոնումները շարունակվում են «Թռչուններ» ժողովածուում, որտեղ հեղինակը փնտրում է անհատի ներաշխարհի բացահայտման նոր ուղիներ՝ կենսապատումի առանձին էջերը դարձնելով XX դարակեսի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական զարգացումների բարդ հանգույցներում հայտնված սերնդի դիմանկարի ամբողջացման միջոց:

«Մեր սիրո երկիրը» ժողովածուում արդեն ինքն իրեն ճանաչել ցանկացող անհատն է, ով ժամանակի հարահոսում փնտրում է իր արմատները, նրանց կենսունակության հայտանիշները: Նշված ժողովածուում բանաստեղծը ներկայացնում է Սիրո մոլորակի իր տեսլականը, այդ մոլորակը լցնում բարությամբ, լուսավորում Աստծո առավոտների անարատ լույսով: Բարությունը, Խիղճը, Հավատն ու Հույսն են թագավորում բանաստեղծի Սիրո մոլորակում, և բանաստեղծը համոզված է, որ, վերջիվերջո, Աստծո օրհնությամբ, սերն է մաքրելու մարդկային մեղավոր հոգիները, սրբագրելու դարերի ընթացքում արմատավորված սխալներն ու բացթողումները:

Երկրորդ գլխում՝ «Ժամանակը բոլոր չափումներով», ներկայացրել ենք ժամանակի, տարածության հետ նրա միասնականության վերաբերյալ Ա. Մարտիրոսյանի պատկերացումները: Մասնավորապես նշել ենք, որ ժամանակի «բաց» և «ներփակ», «գծային» ու «ցիկլային» չափումներում է բանաստեղծը ներկայացնում իր քնարական հերոսին, նրա զեղումներն ու փիլիսոփայական խորհրդածությունները, մտահոգությունները, տագնապները, դրամատիկ ապրումները: Ընդգծել ենք, որ բանաստեղծը մի որոշակի կետում միավորում է ժամանակի տարբեր չափումները՝ պատմության շարունակականության ծիրում ներկա ժամանակը՝ իր մակընթացություններով ու տեղատվություններով ներկայացնելու նպատակով: Այս ստեղծագործություններում արդեն ավելի լիարյուն հոսքով է բաբախում խոհափիլիսոփայական երակը: Ա. Մարտիրոսյանն արդեն գտել է բանաստեղծական կառույցի իր մոդելը, հստակեցրել իր ոճը, ճշգրտել թեմատիկ ընդգրկումների շրջանակները, կողմնորոշման չափանիշները: Բանաստեղծի քնարական հերոսն արդեն ժամանակի տարբեր հանգրվաններում ճանաչում է ինքն իրեն, ավելի մերձ է իր արմատներին:

Բանաստեղծը գտնում է ավանդականի ու նորարարականի «ոսկե միջինը», իր Սիրո մոլորակը դարձնում լույսի ու ներդաշնակության մի գեղեցիկ հովիտ:

Այս գլխում անդրադարձել ենք նաև Ա. Մարտիրոսյանի մանկական բանաստեղծություններին, որոնք նրա գրական ժառանգության թեպետ ոչ ծանրակշիռ, սակայն անբաժանելի մասն են և աչքի են ընկնում ինչպես մանուկ ընթերցողի համար խիստ կարևոր դաստիարակչական և ճանաչողական նշանակությամբ,

այնպես էլ կատարողական բարձր վարպետությամբ, անպաճույճ ոճով ու մատչելիությամբ:

Երրորդ գլխում՝ «Բառը գույնի, լույսի, հավատի ու սիրո համապատկերում(Պոետիկայի հարցեր)», ընդգծել ենք, որ համադրելով հայ միջնադարյան և նոր ու նորագույն պոեզիայի, համաշխարհային գրականությունների ավանդույթներն ու փորձը՝ բանաստեղծը ներկայանում է բանաստեղծական մի համակարգով, որը մարտիրոսյանական ինքնատիպ կառույց է՝ իր պատկերամտածողությամբ, կերպարակերտման յուրահատկություններով, լեզվամտածողությամբ ու բառապաշարով:

Փորձել ենք նաև ցույց տալ, որ Ա. Մարտիրոսյանի բանաստեղծությունները սերնդակիցներից շատերի ստեղծագործություններից տարբերվում են երաժշտականությամբ, բնության երևույթների մարդեղենացմամբ: Նրա բանաստեղծություններում բառը հանդես է գալիս գունային համակարգի, ժամանակի շարժման ու տարածության մեջ, գույնի ու լույսի համապատկերում:

Բանաստեղծը բառի ամբողջականությունը տեսնում է նրա արարչագործության մեջ, որովհետև այն «լող է տալիս հավատքի գետում», իր խորքում կրում ժամանակի բեռը, «ճակատագիր է ի վերուստ տրված, նախնական է ու համասփյուռ»: Բառը շաղկապում է ժամանակի տարբեր հոսքերը, մի ընդհանուր շղթայում ներկայացնում նրա անցյալ-ներկա-ապագա պայմանական չափումները:

Ընդգծել ենք, որ անցնելով որոնումների դժվարին ճանապարհ՝ Ա. Մարտիրոսյանը կարողացավ ստեղծել տարածաժամանակային իր դաշտը, բանաստեղծության իր մոդելը, որը զուտ արմենմարտիրոսյանական է:

Եզրակացության մեջ ներկայացրել ենք ուսումնասիրության արդյունքները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆՈՒՄ

Ա) Ա. Մարտիրոսյանի պոեզիան գրական-գեղարվեստական զարգացումների նոր շրջափուլում(1960-2000-ական թթ.)

Հասարակական-քաղաքական կյանքի կտրուկ շրջադարձներն ու մթնոլորտային փոփոխություններն անվերապահորեն իրենց ազդեցությունն են ունենում մշակութային կյանքում: Սկսվում է առաջընթացի նոր շրջափուլ, ձևավորվում են նոր արժեհամակարգեր, առաջադրվում են ժամանակի պահանջներին համահունչ տեսական-գեղագիտական նոր ծրագրեր, հարստանում են արվեստի և գրականության, նրանց գործառույթների վերաբերյալ պատկերացումները: Անցյալ դարի 60-ական թթ. հայ գրականության մեջ սկսվեց առաջընթացի նոր շրջափուլ, ինչը, բնականաբար, հիմք է տալիս (թեկուզ համառոտ) անդրադառնալ տարբեր ուղղություններով ծավալվող բանաստեղծական որոնումներին: Այդ տասնամյակում գրականություն եկավ տաղանդավոր բանաստեղծների մի սերունդ (Ռ. Դավոյան, Հ. Էդոյան, Ա. Հարությունյան, Ս. Չիլոյան, Հովհ. Գրիգորյան, Հր. Սարուխան, Ա. Ավագյան, Վ. Հակոբյան), որն իր հետ բերեց աշխարհընկալման նոր մեթոդներ, անհատի ու հասարակության, անհատի ու ժամանակի, մարդու և բնության հարաբերությունների մասին նոր պատկերացումներ: Այդ սերնդի համար այլևս խորթ էին գաղափարախոսական կապանքներն ու պարտադրանքները, օրացուցային ձոներն ու փառաբանությունները: Սերնդի ուշադրության կենտրոնում սոցիալ-քաղաքական նոր զարգացումների համապատկերում ինքն իրեն ճանաչել ցանկացող, իր ինքնությանն ու արժանապատվությանը նախանձախնդիր անհատն էր՝ իր մտահոգություններով, դրամատիկ ապրումներով: Գրական-գեղարվեստական զարգացումներն ուղեկցվում էին բուռն բանավեճերով, քննարկումներով, որոնց ակտիվորեն մասնակցում էին նաև սերնդի բանաստեղծները:

Պոեզիայի առաջընթացը ծավալվում էր երկու տարբեր, թերևս պայմանականորեն բնութագրվող ուղղություններով՝ նորարարական և ավանդական: 1960-ականների սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից է Ա. Մարտիրոսյանը, ով կարողացավ հաջողությամբ համադրել հայ միջնադարյան, նոր և եվրոպական ու ռուս գրականությունների փորձը, ստեղծել իր «տարածաժամանակային դաշտը», բանաստեղծության իր ինքնատիպ մոդելը: Նա տարածության ու ժամանակի, նրանց անժխտելի միասնության, այդ միասնության համապատկերում անհատի ներաշխարհի՝

մտահոգությունների, հոգսերի, հուզական ապրումների բանաստեղծականացման նոր ձևեր ու մոտեցումներ է փնտրում, փորձում է թափանցել XX դարակեսի անհատի հոգեկանի խորքերը, իմաստավորել նրա «ներաշխարհի լռությունը»:

Ժամանակը բոլոր չափումներով, տարածությունն այդ չափումների ծիրում ու ծագերում, անհատն իր դրամատիկ ապրումներով,-սրանք են աշխարհայեցողության այն հայտանիշները, որոնցից էլ 1960-2000-ական թթ. գրական-գեղարվեստական զարգացումների համապատկերում հայտածվում է Ա. Մարտիրոսյանի ինքնատիպությունը:

Բ) «Հոգևոր սննդի» որոնման ու «վարպետության դասեր» առնելու ճանապարհին

Պոեզիայում իր տեղն ունենալու լուրջ մտադրություններով գրականություն եկող յուրաքանչյուր բանաստեղծ իր ուղին սկսում է «հոգևոր սննդի» որոնումներով և նախորդներից «վարպետության դասեր» առնելով. «Ես մանկությունից սնվել եմ հայ և համաշխարհային գրականության բարձրագույն արժեքներով՝ անկախ նրանց տարատեսակներից ու արտահայտման բազմապիսի եղանակներից: Սուրբ հոգևոր սնունդը մեծապես նպաստել է բառերի ու պատկերների ուժեղ ու ներգործող դաշտի հանդեպ իմ՝ գրեթե սրբագործված վերաբերմունքի ձևավորմանը»[2]:

Նա փորձում է թափանցել Գ. Նարեկացու տաղերի ու «-Մատյանի» «ներքին հյուսվածքի, բառի, պատկերի, իմաստային ու գեղագիտական նրբերանգների մեջ, որքան հնարավոր է մոտենալ այն տեսիլքին, որ ներշնչման ու ոգեկոչման պահին ուղեկցել է բանաստեղծին իր նշանավոր քերթվածներն արարելիս»[3]:

Որոնումների ճանապարհին Ա. Մարտիրոսյանը «մեղքից ու մեղսագործությունից կատարելապես մաքրված մարդու իդեալին հասնելու» ճանապարհներ է փնտրում միջնադարյան տաղերգու-

---

[2] Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանող անցյալ, Եր., 2010, էջ 191:
[3]Նույն տեղում, էջ 9:

ների գանձարաններում, Հովի. Թումանյանի ստեղծագործություններում գտնում է «արտաքին պատկերների տակ թաքնված թանձր շերտերի ու գույների ներաշխարհում մարդկային հոգեբանության այս կամ այն ելևէջի առարկայացված արտահայտություններ»[4], Պ. Դուրյանի բանաստեղծական համակարգում՝ «գույների տեսանելի հրավառություն, հնչյունների անխամրելի մեղեդի, հոգեկան ապրումների անբացատրելի խորունկ ու գաղտնի շիկացում, Ե.Չարենցի պոեզիայում՝ «հոգևոր ու տեսլական պատկերը իբրև բանաստեղծի գիտակցական կյանքի հենասյուներ»[5] ներկայացնելու աննախադեպ յուրահատկություն: Վ. Տերյանը, ռուս սիմվոլիստներն ու Ս. Եսենինը բանաստեղծի առջև փռում են գույների ու հնչյունների անտեսանելի նրբերանգներն ու ելևէջները, սովորական լսողությանը անհասանելի շրշյունները, Ու. Ուիթմենն ու Վլ. Մայակովսկին «օգնում են» մարդուն տեսնել տիեզերական բարձունքից ու նրան ներկայացնել տարածական տարբեր հարթություններում:

Մեծ առումով՝ դասականները երիտասարդ բանաստեղծին են փոխանցում կյանքին ու աշխարհին նայելու հայեցակետեր, որոնք որոնումների ճանապարհին հարստանում են նոր տեսանկյուններով:

Ա. Մարտիրոսյանի «Բանաստեղծություններ» վերնագրով առաջին ժողովածուն լույս տեսավ 1973 թվականին՝ երկարատև հրատարակչական քաշքշուկից, առանձին բանաստեղծությունների՝ ժողովածուից դուրս թողնելուց հետո:

Նույն ճակատագրին արժանացան նաև սերնդի մյուս բանաստեղծների առաջին ժողովածուները (Հովի. Գրիգորյան «Երգեր առանց երաժշտության» (1975), Հ. Էդոյան «Անդրադարձումներ» (1977), Ա. Հարությունյան «Նշանների երկիր» (1977), Հ. Սարուխան «Եզրագծեր» (1977), Կ. Մելիքսեթյան «Ադամամութ» (1977), Ա. Պարսամյան «Խոստովանանք» (1977) և այլն):

Առաջին իսկ ժողովածուից սկսած՝ Ա. Մարտիրոսյանն իր բանաստեղծություններում ներկայացնում է անցած ճանապարհի հատվածներ, որոնք շարքից շարք, ժողովածուից ժողովածու շարժընթացով միահյուսվում են մի ընդհանուր շղթայի մեջ:

---

[4]Նույն տեղում, էջ 28-36:

[5] Նույն տեղում, էջ 32:

Ժողովածուի շարային կառուցվածքը դառնում է Ա. Մարտիրոսյանի բանաստեղծական համակարգի յուրահատկություններից մեկը: Նա տարբեր ժողովածուներում զետեղված բանաստեղծությունները համախմբում է թեմատիկ-գեղագիտական առանցքների շուրջ, շաղկապում միմյանց: Կարևորը, տվյալ պարագայում, նրանց ներքին կապն է, ժամանակի ու տարածության տարբեր հանգրվաններում բանաստեղծի՝ իր գեղագիտական իդեալի բացահայտման ուղիների փնտրտուքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԺԱՄԱՆԱԿԸ ԲՈԼՈՐ ՉԱՓՈՒՄՆԵՐՈՎ

Ա) Կողմնորոշման չափանիշների ու թեմատիկ ընդգրկումների ճշգրտման փորձերը

«Բանաստեղծություններ» ժողովածուում ճշգրտվում են կողմնորոշման չափանիշները, թեմատիկ ընդգրկումների շրջանակները: Բանաստեղծը նախ փորձում է ճշգրտել՝ կարո՞ղ է ինքը անաղարտ պահել իր երգը, գրականության խիտ բնակեցված տարածքում ունենալ իր, Պ. Սևակի արտահայտությամբ, «տունն ու տեղը» և «տնփեսայի» կարգավիճակով չբնակվել այս կամ այն դասականի կամ եվրոպական գրականության որևէ ժամանակակցի տարածքում: Եվ, վերջապես, կարո՞ղ է մարսել որոնումների ճանապարհին ձեռք բերած «հոգևոր սնունդը», «վարպետության դասերից» նոր դասեր քաղել:

Ա. Մարտիրոսյանի բանաստեղծական համակարգում «-Բանաստեղծություններ» և «Թռչուններ» ժողովածուներից է սկիզբ առնում դարերից եկող մեր պոեզիայի՝ լույսի, լինելության, վերընձյուղվելումայր երակը, որ հաջորդ ժողովածուներում տրոփում է ավելի լիարյուն: Ամենուրեք լույս է փնտրում բանաստեղծը, լույսի կենարար շողեր՝ նորածին մանկանց խանձարուրներում, նրանց անգույն արցունքներում, անգամ Խոր վիրապի մթին քարանձավներում, ծերունի բամբիռահարի երգերում, պապի, տատի, ծնողների աչքերում…

1978 թվականին Ա. Մարտիրոսյանը հրատարակեց բանաստեղծությունների երկրորդ՝ «Թռչուններ» ժողովածուն, որը

որոնումների, կողմնորոշման չափանիշների ճշգրտման, վարպետության կատարելագործման նոր հանգրվան էր:

«Թռչուններ» ժողովածուում արդեն կենսապատումի առանձին դրվագներիգեղարվեստականացման ճանապարհով բանաստեղծը փորձում է բացահայտել «թռիչքի ու մահվան ժամանակը», որն արդեն որոշակիանում է «Ժամերգություն» ժողովածուում:

Բանաստեղծի ստեղծագործական որոնումները շարունակվում են «Մեր սիրո երկիրը» ժողովածուում:

Նոր ժամանակները նոր պահանջներ են առաջադրում, և բանաստեղծը, փորձում է բացահայտել ժամանակակից մարդու բարդ ու հակասական ներաշխարհը, նրա բախումը իրականության հետ:

Առաջին ժողովածուների եթերային ոլորտներից բանաստեղծն իջնում է իրականություն՝ քաղաքային միջավայր, փորձում բացահայտել քաղաքաբնակ մտավորականի բարդ ու հակասական ներաշխարհը:

Ժողովածուն բացվում է «Մեր սիրո երկիրը» շարքով: Ա. Մարտիրոսյանի բանաստեղծությունների նոր ժողովածուում բառերն արդեն մարդկանց տառապանքի վայրկյաններն արթնացնող թռչուններ չեն միայն: Բառերը պատռում են իրենց կեղևը, վերածվում խորհրդանիշների, ամբողջացնում վերապրումների համապատկերը: Բանաստեղծը նախորդ ժողովածուների իմաստնացած, աշխարհի անցուդարձը փիլիսոփայորեն ընկալել ցանկացող, միաժամանակ ամեն ինչի վրա զարմացող ծերունի-երեխան է՝ մի ոտքը տիեզերական անսահմանության մեջ, մյուսը՝ հենված մայր հողին՝ իրականությանը: Նա իրեն արդեն տեսնում է երկու կյանքերի հորիզոններում, ընթերցողին տեղափոխում է բարության ու սիրո իր մոլորակը, որտեղ ամեն ինչ նախնականորեն պարզ է ու գեղեցիկ, շղարշված կապույտի ու ոսկեգույնի եզրագծերով:

Նա ոգեղենը փնտրում է «երկու կյանքերի հորիզոններում» և «այստեղ»՝ Արքայության ճանապարհից շեղված մարդկանց մեջ չգտնելով ոչինչ, հայացքն ուղղում է դեպի տեսիլքների հեքիաթային աշխարհը, դեպի «այնտեղ», ուր ամեն ինչ մաքուր է ու անարատ, կուսական ու անեղծ:

«Այստեղ»՝ այս հողի վրա, «սերը ապրում է կարկատաններով», իսկ «այնտեղ»՝ «երկնային ծովի ամպերի արծաթ» հորիզոններում, լողում է «ոսկե ձկնիկը բախտի»: «Այստեղ» «մեզնից հեռա-

ցած հին տարիների տխուր կաթիլքի լուսապսակն է՝ կապույտ երկինքը գլխավերևում», «այնտեղ սերն է առանց կարկատան»:

Բ) Ժամանակների կապի բանաստեղծական ընկալումները

Յուրաքանչյուր գրողի համար ժամանակի զգացողությունը, անկասկած, անհատական է, և գրողն ինքն է ընտրում այն ներկայացնելու, նրա ընթացքին հետևելու, շարժընթացի տարբեր հանգրվանները մի որոշակի կետում միավորելու, մեծ հաշվով՝ պատմության շարունակականության ծիրում ընթացիկ ժամանակը ներկայացնելու մեթոդներն ու եղանակները:

Ժամանակը, անտարակույս, իր հետքն է թողել Ա. Մարտիրոսյանի պոեզիայում, առաջադրել նոր խնդիրներ, մղել համարձակ որոնումների, հստակեցրել կողմնորոշման չափանիշներն ու «հարվածի թիրախները»: Ժամանակի շարժմանը զուգընթաց բանաստեղծն ավելի է հասունացել, բացվել նախ՝ ինքն իր, ապա և աշխարհի առջև:

Ժամանակն է կանխորոշում ամեն ինչ, և նրա կամուրջի վրա ոչ բոլորն են ոտնահետք թողնում. ընտրյալներն են միայն առանձնանում դեպի վեր մագլցողներից.

Ինչ-որ մեկը խորունկ ոտնահետք է թողել.
հազար տարի առաջ պարանն ի վեր մագլցելով՝
դուրս է եկել խավար իր վիրապից,
ձեռքին՝ լույսի կանթեղ Ծիր-Կաթինե,
ու իր հետքն է դաջել երթևեկող
կամուրջ-Ժամանակի անեզրության վրա,
որ հետևից նրա ուրիշ մագլցողներ ելնեն հազարավոր[6]:

Ժամանակի կամուրջի վրա՝ դարակեսի անկանխատեսելի զարգացումների համապատկերում, մոլորված անհատն է, որի ներաշխարհում մերթ քաոս է, մերթ՝ ապագայից ճառագող լույսի բեկբեկուն շողեր. նրա ներաշխարհում բախվում են երազն ու գորշ առօրյան,միֆականն ու առօրեականը:

---

[6] Մարտիրոսյան Ա., Ներաշխարհի լռությունը, Եր., ՀԳՄ հրատ., 2008, էջ 6:

Ա.Մարտիոսյանի բանաստեղծական համակարգում ժամանակների կապի ընկալման իմաստով առանձնանում է յոթ մասից կազմված «Ինքնանկար» շարքը՝ գեղարվեստական մի ուշագրավ պատում բանաստեղծի, նրա սերնդի, պատմության, ներկայի ու ապագայի մասին:

Յոթ չափածո նովելներից կազմված այդ ստեղծագործության մեջ բանաստեղծն իր կենսագրության առանձին շրջանների գեղարվեստականացման միջոցով հյուսում է սերնդի կենսապատումը՝ մի կողմից ժամանակի «ցիկլային» (ծնունդ, մանկություն, պատանեկություն, հասուն տարիք), մյուս կողմից «գծային» (ժամանակի ավելի ընդգրկուն հատվածներ) սահմաններում:

Ժողովածուից ժողովածու, շարքից շարք ժամանակի «ցիկլային» շրջանի բանաստեղծական տողերի ենթատեքստում նշմարվում են պատումի «գծային» ժամանակի իրողությունները (պատերազմի շրջանի մանկության, պատանեկության տարիներ, պոեզիայի տաճարը մտնելու տառապագին շրջան): «Ցիկլային» սահմանները միավորվում և ամբողջացնում են ընդգրկումների «գծային» համապատկերը: Յուրաքանչյուր ցիկլ ավարտվում և դառնում է Սկիզբ մի նոր շրջափուլի՝ հաստատելով, որ կյանքի ճանապարհը ձգվում է կամ դեպի հավիտենություն, կամ էլ դեպի մոռացում. երկու դեպքում էլ Սկիզբն ու Վերջը չեն երևում.

«Գծային» կտրվածքով բանաստեղծի կենսագրության յուրաքանչյուր հանգրվանում հայրենիքն է՝ իր հերոսական ու ողբերգական անցյալով, բաբելոնյան աշտարակաշինությունից մինչև մեր օրերը, մեր քաջազուն զավակների հերոսամարտերն են ու նաև մեր պարտությունները՝ պատմության ընթացքից դասեր չառնելու պատճառով, մեր հոգևոր մաքառումներն են՝ որպես մեր գոյության առեղծվածի բացահայտման բանալիներ:

Գ) Ներկայում հանգրվանող անցյալ

Համաշխարհային գրականության փորձը ցույց է տալիս, որ գրողներն անցյալին անդրադառնում են ներկայում նրա շարունակականության բացահայտման նպատակով, որովհետև «ներկան նորի ծնունդն է՝ ծագող ժամանակով իրականացվող, անցյալ ժամանակից եկող ինֆորմացիայի հիման վրա: Անցյալը գոյություն ու-

նի լոկ այնքանով, որքանով նրա մեջ պահպանվել է ներկայի կառուցվածքային էներգիան»[7]:

Որոնումների նոր հանգրվանում Ա. Մարտիրոսյանը հայացքն ուղղում է դեպի միջնադար:

Անցյալը բանաստեղծը ներկայացնում է միջնադարյան բանարվեստի գույներով ու նրբերանգներով: Միջնադարը նրա համար դառնում է ոգեշնչման անսպառ աղբյուր, թարմ լիցքեր է հաղորդում բանաստեղծություններին, ինչն ակնառու կերպով դրսևորվեց «Միջնադարի առավոտը» շարքում, որը բանաստեղծը ներկայացնում է որպես պոեմ:

Պատմության մայրուղին անցնում է ժամանակի տարբեր չափումների զուգահեռներով և ամբողջացնում է «այս մի հատիկ երկրի» ընդհանրական կերպարը:

«Այս մի հատիկ երկրի» ամուր հենասյունը, որ չի ճկվել ու չի խարխլվել փոթորիկներից ու ալեկոծումներից, լեզուն է, որի «պահապան վերմակի տակ չկան շինական ու թագավոր».

«Լեզվի պահապան վերմակի տակ» բոլորը զինվոր են, և զինվոր ու զորավար են լինելու նաև նրանց զավակները:

Այդ վերմակի տակ բոլորը ապրում են, ապահով ու վստահ, որովհետև գիտեն, որ «տանիքից բարձր, աստղանկար հեռվում// բնակվում է մեկը, որ մշտապես արթուն է//, և ամուր գոցում է դարպասը քաղաքի և խարխուլ խրճիթի դռները փակում է հազար ու մի գողի ու հարամու առջև:

Փոքրաքանակ ժողովուրդները, որոնք չեն հայտնվել պատմության լուսանցքներում, գոյատևել են ոչ միայն հերոսամարտերով, այլ նաև լեզվով, հոգևոր մաքառումներով՝ գրականությամբ ու մշակույթով, արվեստի կոթողներով:

Հոգևոր մաքառումները նպաստել են ժողովրդի ոչ թե գոյատևելու, այլ հարատևելու՝ գենետիկորեն սերնդեսերունդ փոխանցվող ձգտումներին:

Մեր նախնիները մեզ չեն ժառանգել պայքարի ու ըմբոստության ոգին, և մեր նորօրյա տերերը, նախնիների հանգույն, համակվել են «արքա դառնալու» մարմաջով. «ոսկու և փառքի» պատերազմ են մղում «միամիտ ու աղքատ հոգիների դեմ», եկե-

---

[7] Голубев В. С., Феномен времени и социоестественная история, История и современность, М., 2011, стр. 65.

ղեցիներ են կառուցում՝ Բարձրյալի թողությանն արժանանալու, մեղքերից մաքրվելու համար: Բոլոր պատերազմներից ամենասարսափելին է այս պատերազմը: Մենք պատերազմներ շատ ենք տեսել: Շեն, բարգավաճ քաղաքներ են ավերվել, բայց հետո վերականգնվել են, իմացյալ մահով հերոսներ են նահատակվել, բայց հետո նոր քաջորդիներ են ծնվել ու փոխարինել նրանց, մագաղաթյա մատյաններ ու ձեռագրեր են հրի ճարակ դարձել, բայց հետո նորերն են գրվել ու ծաղկվել, լցվել շարականներով, սաղմոսներով ու գանձերով, նախշազարդվել որդան կարմիրով:

Իսկ հիմա չգիտես ու՞մ «անեծքով տարաբանվեց մեր տեսականին», ու համավարակի վերածեց ոգու սովը: Բանաստեղծն անցյալի Խոր Վիրապում փակված՝ թերթում «ձեռքին մաշված ափի գիրքը» ու սպասում չարը խարսխող դարբինների վերադարձին:

Ցավ ու տառապանք կա բանաստեղծի տողերում, ցավ առ այն, որ «մարդկանց ոտնահետքերի հունով լողում է// համատարած գետը մեղսագործության».

Ո՞վ հասցրեց մեզ, տեր,
այս Սոդոմ-Գոմորին հավերժական ներկա,
քաղաքը տնքում է համատարած մեղքի
և աճող աղոթատների առատությունից[8]:

Անկանխատեսելի զարգացումների ներկայում բանաստեղծի համար դրախտն իր երկիրն է, և ինչքան էլ դաժան լինեն կյանքի պայմանները, ինչքան էլ բարբարոս սադայելները վիրապներ փորեն նրա ոտքերի տակ.

Իմն է այս դժոխքը,
իմն է, իմ միակը, իմ սերը, իմ աստվածուհին,
չեմ զիջելու նրան այլևս ոչ մեկին,
իմն է այս հնոցը՝ հար եռացող կուպրով,
որի անեզրական և սև ալիքներում
խորտակվում է հոգիս – խամրակյաց ու մերկ,
իմն է այս խարույկը անհանգչելի վառվող...[9]

Սա է բանաստեղծի հավատամքը, դեպի Արքայության գնալու, Բարձրյալի հետ հաղորդակցվելու, ավետարանական նրա

---

[8]Մարտիրոսյան Ա., Ներաշխարհի լռությունը, էջ 74 :
[9] Նույն տեղում, էջ 70:

պատվիրաններին հավատարիմ մնալու միակ ճիշտ, դարերի փորձությամբ ստուգված և ժամանակի հոլովույթում արդարացված ճանապարհը:

Ա. Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհն ամբողջացնում են նրա մանկական բանաստեղծությունները, որոնք զետեղված են «Սկյուռիկ թագավորը» (1976), «Հեքիաթասաց սունկը» (1988) և «Նկարիչ արևը» (2004) ժողովածուներում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲԱՌԸ ԳՈՒՅՆԻ, ԼՈՒՅՍԻ, ՀԱՎԱՏԻ ՈՒ ՍԻՐՈ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ(ՊՈԵՏԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐ)

«Ինձ համար,-գրում է Ա. Մարտիրոսյանը,-բառերը դադարել են բառարանային իմաստների «նեղ ու անձուկ» կաղապարներ լինելուց: Նրանք ամենից առաջ գույն են, լույս, հավատ, սեր, մկրտություն: Ես ամեն օր, ամեն ակնթարթ ճգնավորի նման սնվում են նրանց պարգևած լույսով, գույնով, շարժմամբ»[10]:

Կողմնորոշման չափանիշը Գ. Նարեկացին էր, «ում բառերն այլևս բառեր չեն, խտացված գույներ են ու նրբահյուս մեղեդի և այնքան տեղին են օգտագործված, որ գրեթե յուրաքանչյուր քայլքին ու ճոճքին համընթաց շարժվում են, և թվում է՝ մեր աչքի առջև Ռաֆայելի Աստվածածինն է»[11]:

Նարեկացու հանգույն բառը՝ «որպես գույնի ու պատկերի ներդաշնակություն», «սփռվում է մարմինների հղկված վարշամակի վրա», «ներթափանցում պատկերի իմաստային ու գեղագիտական նրբերանգների մեջ՝ մոտենալով այն տեսիլքին, որը ներշնչման ու ոգեշնչման պահին»[12] ուղեկցում է բանաստեղծին: Եվ, ինչպես Գ. Նարեկացու տաղերում, բառը ստեղծում է գույնի ու մեղեդու մի զարմանահրաշ ներդաշնակություն;

---

[10]Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանող անցյալ, էջ 96:
[11]Նույն տեղում, էջ 87:
[12]Մարտիրոսյան Ա., Ներաշխարհի լռությունը, էջ 63:

Բառերը բանաստեղծի ներաշխարհի քարանձավը լցնում են «մկրտության ձյունաճերմակ կաթով» ու հավատով, որ լույսն այնտեղ երբեք չմարի:

Բառերը «տողի լռության ու հառաչանքի հանքաշերտեր են բացում», և լեզու է առնում ու խոսում լռությունը՝ մերթ որպես հոգու խորքից պոռթկացող հառաչանք, մերթ որպես քարանձավում արձագանքող ճիչ, ահազանգ: Բառի արարչական իմաստը փնտրող բանաստեղծը առաջին ժողովածուներում դեռևս նման է փոքրիկ թռչնակի, որ լուսաբացին ճախրում է երկնքում ու կտցին վարդաջրեր է տանում՝ ջրդեղելու երկնի կապույտը և բարության ու սիրո հունդեր սփռելու երկրի վրա:

Եթե առաջին ժողովածուներում բանաստեղծը բառերի գանձարանում «ադամանդի հատիկներ» է փնտրում, փորձում գտնել նրանց համար նոր իմաստ ու բովանդակություն, եթե այդ ժողովածուներում «մշուշների միջով են արթնանում բառերը և արթնանալով ցողվում են ամեն ինչի վրա», եթե «երազները պտտվում են չհասկացված բառերի շուրջ», ապա սկսած «Մեր սիրո երկիրը» ժողովածուից՝ բանաստեղծը եթերային ոլորտներից իջնում ու հասնում է մի հանգրվանի, ուր « ջրհեղեղից փրկվելու համար» ձկների նման վարժեցված մարդիկ, ովքեր գիշատիչ են, «լող են տալիս ապակեպատ խեցում՝ բերնեբերան լցված կեղծ բառերի թափվող անձրևներով, կեղծ բառերի արցունքներով» համավարակի պես «և տեղատարափ, և վարակիչ»:

Սպիտակ թուղթը կեղծ, հավուր պատշաճի արտաբերված և բանաստեղծական կառույցի մեջ մեծ ճիգերով խցկված բառեր չի հանդուրժում: Բառը պիտի լինի հեթանոսորեն մերկ, թափանցիկ, բանաստեղծի համար պիտի հանդիսանա տրանսցենդենտալին (այնկողմնայինին) հաղորդակցվելու, այնտեղ թաքնված խորհրդանիշների միջոցով աշխարհը ճանաչելու, ժամանակի շարժընթացին համաչափ տեղաշարժվելու հնարավորություն ընձեռող բանալի:

Բառերը, այսպիսով, Ա. Մարտիրոսյանի բանաստեղծական համակարգում հանդես են գալիս որպես «իրերի որոշակի դասավորություն, երևույթների ընկալման դիտակետ, աշխարհայացք,

փիլիսոփայություն, պոեզիայի տարրեր, որոնք կազմավորվում են բանաստեղծության տաղաչափությունն ու մորֆոլոգիան»[13]:

Բառիմաստի ներքին դինամիկան սուր հնչեղությամբ է արձագանքում ժամանակակից աշխարհի ռիթմերին: Կաղապարներն ու զսպաշապիկները ճեղքելով՝ բառերը թափվում են երկրի վրա, և բանաստեղծի շուրթերին, ինչպես Աստծո որդու շուրթերին, «մաքրության տերևներ են ճոճվում»:

Ա. Մարտիրոսյանը փորձարկում է բանաստեղծության կառուցվածքի տարբեր ձևեր, որն արտահայտվում է մի շարք դրսևորումներով՝ ներքին հանգավորում, բառամիջի դադար տողի կեսում (հատած, цезура), բաղաձայնույթներ (ալիտերացիա) և առձայնույթներ (ասոնանս), նմանաձայնություններ և այլն:

Ներքին հանգերը բանաստեղծության մեղեդին դարձնում են ավելի արտահայտիչ, աստիճանակարգում ռիթմերը:

Ա. Մարտիրոսյանը փորձարկում է նաև բանաստեղծական կառույցի տարբեր միջոցներ: Օրինակ՝ բանաստեղծության տողերը սկսելով շաղկապներով, որոնք շարժումը ներկայացնում են աստիճանական արագացման ընթացքում, նոր ելևէջներ հաղորդում տողին, ավելի ընդգծում ռիթմական միավորները:

Ուշադրության արժանի են Ա. Մարտիրոսյանի բնապատկերները, որոնք նա օգտագործում է որպես հոգեվիճակների բացահայտման միջոց՝ անտեսանելի գույների երևակման, անլսելի շշուկների մեղեդավորման նկատառումներով:

Նրա գույները մերթ թանձր են, բայց ոչ միատոն, մերթ տարբեր երանգներով երիզված, ձայները՝ գույներին համահունչ՝ մերթ շշուկով արտաբերվող, մերթ վարարուն ու հնչեղ, պատկերները՝ տեսանելի ու շոշափելի, գույները համահունչ են բնապատկերներին. աշնանայինը՝ ոսկեգույն ու տաք են, ձմեռայինը՝ անբիծ ու լուսավոր: Ավելի թանձր են ամառային գույները:

Անցնելով որոնումների դժվարին, խոչընդոտներով լեցուն ճանապարհ, «վարպետության դասեր» առնելով հայ և համաշխարհային գրականության մեծերից՝ Ա. Մարտիրոսյանը սահմանագծեց բանաստեղծության իր տարածքը, ստեղծեց իր արմեն-մարտիրոսյանական մոդելը:

---

[13]Սարինյան Ս., Անհնարին է պահի մեջ չտեսնել հավերժությունը, «Գրական թերթ», 2016, № 26:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ եզրակացության կարելի է հանգել «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» ուսումնասիրության արդյունքում.

1. Համադրելով հայ միջնադարյան, նոր և նորագույն գրականության, ռուս և եվրոպական դասական ու ժամանակակից պոեզիայի փորձը՝ Ա.Մարտիրոսյանը գտավ դրանց «ոսկե միջինը», որը բնութագրվում է ժամանակի ու տարածության միասնականության վերաբերյալ ուրույն պատկերացումներով: Նա ստեղծեց բանաստեղծության՝ կառուցվածքի ինքնատիպությամբ, լեզվաոճական յուրահատկություններով աչքի ընկնող իր ինքնատիպ մոդելը:
2. Ա.Մարտիրոսյանի բանաստեղծական համակարգի յուրահատկություններից մեկը շարային կառուցվածքն է: Նրա ժողովածուները ոչ թե պատահականորեն ընտրված բանաստեղծությունների հատորյակներ են, այլ թեմատիկ-գաղափարական առանցքների շուրջ ի մի բերված ստեղծագործություններ, որոնք մի որոշակի հանգույցում միավորվում ու ամբողջացնում են նրա բանաստեղծական համակարգը:Բանաստեղծությունները խմբավորելով թեմատիկ-գաղափարական առանցքների շուրջ՝ Ա.Մարտիրոսյանը բոլոր պարագաներում ուշադրության կենտրոնում է պահում ժամանակակից անհատին, ով ինքնաճանաչման ու ինքնամաքրման ճանապարհներ է որոնում ու ավելի մերձ է իր արմատներին:
3. Ա. Մարտիրոսյանը աշխարհը տեսնում է իր (իմա՝ իր սերնդի) կենսապատումի տարբեր հանգրվանների «ապակեպատ պատուհանից», և ժամանակի հարահոսում աշխարհը նրան երևում է ոչ այնպես, ինչպես որ կա: «Ապակեպատ պատուհանից» երևացող աշխարհի գույներն ու ձայները, մեծ հաշվով՝ տեսանելի և լսելի ամեն ինչ, բեկվում է բանաստեղծի պրիզմայով, ձևափոխվում, գունավորվում ու հնչյունավորվում

ըստ նրա աշխարհայեցողության: Սովորական լսողության ու տեսողության համար, աբսուրդային թվացող իրավիճակները, առարկաների ներքին կապը ներկայացվում են գեղարվեստի նոր ձևերով, հետաքրքիր, երբեմն դժվար ընկալելի հանգուցալուծումներով:

4. Իր բանաստեղծություններում Ա.Մարտիրոսյանը հայրենասիրության, սիրո, գոյի, անցավորի ու մնայունի, իրականության ու տիեզերականի, կյանքի ու մահվան թեմաները ներկայացնում է նորովի մոտեցումներով, փնտրում է չյուրացված տարածքներ, ստեղծում է իր մոլորակը և բնակեցնում ինքնամաքրման ձգտող անհատներով՝ իրենց մտահոգությունների, հոգսերի, դրամատիկ ապրումների, երազանքների համապատկերում:
5. Սիրո ու բարության իր մոլորակում բանաստեղծը շաղկապում է ժամանակի տարբեր հոսքերը մի ընդհանուր շղթայում, որտեղ անցյալը հանգրվանում է ներկայում, իսկ ապագան ներկայանում է անցյալի ու ներկայի հետ միաձույլ կապերով: Ժամանակի «բաց» և «ներփակ» շրջանակներում Ա.Մարտիրոսյանը հետևում է ժամանակի շարժընթացին և հայացքն ուղղում դեպի միջնադար: Պահպանելով շարականի ավանդական կառուցվածքը՝ Ա. Մարտիրոսյանը նրա պատվանդանի վրա տեղադրում է ժամանակակից բանաստեղծություններ, որոնց ամբողջությունը, ներքին տրամաբանությունից ելնելով, «Շարակնոց» է անվանում: Շարքի առանցքում ինքնամաքրման, Աստծուն մերձենալու ճանապարհով է դրախտի և դժոխքի պարունակներում մոլորված անհատը գնում դեպի Արքայություն և Աստծու պատգամն է հղում մեղավոր հոգիներին: Ինչպես «Շարակնոց»-ում, այնպես էլ բանաստեղծությունների մնացած շարքերում բանաստեղծը ներկայացնում է 20-րդ դարավերջի մեր երկրի պատկերը, որն այնքան էլ չի փոխվել բովանդակությամբ:
6. Ա.Մարտիրոսյանը փորձարկում է բանաստեղծության կառույցի տարբեր ձևեր՝ դասական-ավանդական ու անհանգ, ռիթմական տարբեր միավորների համադրմամբ փնտրում է նոր

բառեր, դրանք ներկայացնում գունային համակարգի նոր նրբագծերով: Նրա բանաստեղծություններից շատերն ունեն սյուժե, ֆաբուլա, հանգույցներ ու հանգուցալուծում, ոճական ինքնատիպություն:

7. «Թռչուններ» ժողովածուից մինչև «Ժամերգություն» և «Արգելված պտուղը» ժողովածուները Ա. Մատիրոսյանը ստեղծեց իր ներքին օրինաչափություններով աչքի ընկնող ավարտուն ու ամբողջական մի համակարգ:

Ուսումնասիրության բովանդակությունը արտացոլված է ատենախոսի կողմից հրատարակված հետևյալ հոդվածներում և մենագրության մեջ.

1. Բառը ձգտում է հավիտենությանն, «Հայագիտական հանդես», 2017թ. 2(36), էջ 176-180:
2. Ավանդականն ու նորարարականը Արմեն Մարտիրոսյանի պոեզիայում, «Հայագիտական հանդես», 2017թ. 3(37), էջ 110-117:
3. Ժամանակի կատեգորիան Արմեն Մարտիրոսյանի «Միջնադարի առավոտը» բանաստեղծությունների շարքում, «Կանթեղ», 2017թ. 4(73), էջ 52-57:
4. Արմեն Մարտիրոսյանի պոեզիան հետսևակյան շրջանի գրական առաջընթացի համապատկերում, «Հայագիտական հանդես», 2018թ. 3(41), էջ 71-79:
5. Ներաշխարհի խոսուն լռությունը, «Կանթեղ», 2018թ. 2(75), էջ 40-44:
6. Արմեն Մարտիրոսյանի «Շարակնոց» ժողովածուն, «Ակունք», 2018թ. 2(18), էջ 86-91:
7. Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը, «Կանթեղ», 2018թ. 4(77), էջ 63-68:
8. «Ներկայում հանգրվանող անցյալ» (պատմության շարունակականության ընկալումները Արմեն Մարտիրոսյանի «Միջնադարի առավոտը» բանաստեղծությունների շարքում), «Պատմություն և քաղաքականություն», 2020թ. 3(8), էջ 65-69:

9. Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը, Եր., 2020, «Արմեն-Ասմագուլյան» հրտ. (հեղինակային հրատարակություն), 122 էջ:
10. Բանաստեղծության արմենմարտիրոսյանական մոդելը, «-Պատմություն և քաղաքականություն», Եր., 2021թ., 1(12), էջ 21-27:

.

Саргсян Нинель Гагиковна
Поэтический мир Армена Мартиросяна
Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 «Армянская литература новейшего периода»
Защита состоится 17-ого декабря 2021 года в 12:00 на заседании Диссертационного совета 003 по специальности«Литература» при Институте литературы имени М. Абегяна НАН РА по адресу: г. Ереван, ул. Г. Лусаворич 15.

РЕЗЮМЕ

По результатам исследования «Поэтический мир Армена Мартиросяна»выводыследующие.

1. Сравнив опыт армянской средневековой, современной литературы, русской и европейской классической и современной поэзии, А. Мартиросян нашел ту «золотую середину», которая характеризуется уникальными представлениями о единстве времени и пространства. Он создает свою уникальную модель поэзии, которая отличается оригинальной структурой и языковыми особенностями.
2. Одна из особенностей поэтической системы А. Мартиросяна – линейность. Произведения, включенные в сборники, выбраны не случайно; ониобъединены тематико-идеологическимиособенностями, которые соединяются в определенный узел и завершают поэтическую систему в целом. Сгруппировав стихотворения потематико-идеологическомупринципу, у А. Мартиросяна в центре внимания современник, ищущий путь к самопознанию и самоочищению, осмысляющий свои корни человек.
3. А. Мартиросян видит мир сквозь «застекленное окно» на разных этапахсвоейжизнии жизни своего поколения, и в потокевремени мир не такой, какой он в действительности. Цвета и звуки мира, исходящие из-за «застеклянного окна», всё видимое и слышимое,по сути, преломляется сквозь призму поэта, трансформируется, окрашивается и формирует созвучие с его мировоззрением. Ситуации, кажущиеся абсурдными для обычного слуха и зрения,как и внутренняя связь предметов, представлена в новойхудожественной форме, в интересных, порой трудных для понимания развязках.
4. А. Мартиросян в своих произведениях обращается к темам и мотивам– патриотизма, любви, бытия, преходящего и постоянного, реальности и пространства, жизни и смерти –в новом контексте, ищет неизведанные подходы иобласти, создает свой мир и населяет ее

личностями, стремящимися к самоочищению, людьми, у которых свои заботы, хлопоты, переживания,драматическиечувства и мечтания.

5. Поэтв своем мире любви и добра соединяет в общую цепьразные потоки времени, где прошлое покоится в настоящем, а будущее представлено в единении с прошлым и настоящим. В «открытых» и «закрытых» границахэпох А. Мартиросян прослеживает движение времени и устремляет свой взгляд в средневековье. Сохраняя традиционную структуру гимна, А. Мартиросян воздвигает на этом пьедестале современные стихи, которые, согласно внутренней логике, называет «Шаракноц» (Сборник армянских церковных песнопений). В основе цикла–идея пути к самоочищению личности, который,заблудившисьв понимании рая и ада, приближается к Богу,отправляется в Царство и, как посланник, говорит грешным душам о заветах Бога. Как в «Шаракноц»-е, так и в остальной части цикла стихотворений поэт представляет образ нашей страны конца XX века, который не сильно изменился в своем содержании.

6. А. Мартиросян экспериментирует с разными формами структуры стихотворения, традиционно-классическими и нерифмованными, комбинируя разные ритмические единицы, ищет новые слова,придавая им новые смыслыи цветовуюгамму. Многие из его стихотворений имеют сюжет, фабулу, завязку и развязку, стилистические особенности.

7. Начиная со сборника ««Թռչունները»» («Птицы») до сборников «Ժամերգություն» («Богослужение») и «Արգելված պտուղ» («Запретный плод»), А. Матиросян создает завершенную и цельнуюпоэтическую систему с присущими ей внутренними закономерностями и этапами развития.

Сборники второго периода творчества отличаются особеннойстилистической однородностью, в которых синтезируются уникальные лирические и эпическиечерты поэтики инемногословность с целью обогащениятрадиционногопланастихотворенияновыми деталями, делая главным не «украшательство» и косметические изменения, а поиск и добавлениеизящества в грациозность и стройность поэзии.

NINEL SARGSYAN

ARMEN MARTIROSYAN'S POETIC WORLD

Abstract of the thesis for the degree of Candidate of Philological Sciences in the specialty 10.01.02 on "Armenian literature of the contemporary period".

Thesis defense will take place on the of 17 december at 12:00 p.m. at the meeting of the Specialized Council of the Higher Attestation Commission for awarding academic degrees at the RA National Academy of Sciences, Institute of literature after M. Abeghyan. Addrecc 15 Grigor Lusavorich.

SUMMARY

What conclusion can be made as a result of studying "Armen Martirosyan's poetic world"?

1. Combining the experience of Armenian medieval, new and contemporary literature, Russian-European classical and modern poetry, A. Martirosyan found their "golden mean", which was characterized by unique ideas about the unity of time and space. He created his own unique model of poetry, which stood out with its original structure and linguistic peculiarities.

2. One of the peculiarities of A. Martirosyan's poetic system is the linear structure. His collections are not randomly selected volumes of poems, but works brought together around thematic-ideological axes, which are united in a certain knot and make his poetic system complete. Grouping the poems around thematic-ideological axes, A. Martirosyan, in all cases, keeps in the center of attention the modern individual, who seeks ways of self-knowledge and self-purification and is closer to his roots.

3. A. Martirosyan sees the world through the "glass window" of different stages of his life, and in the flow of time the world seems to him not what it really is. The colours and sounds of the world coming from the "glass window", everything visible and audible, are refracted through the prism of the poet, transformed, coloured and sounded according to his worldview. Seemingly absurd situations, which are ordinary for sight and hearing, the internal connection of objects are presented with new forms of art, with interesting, sometimes difficult to understand solutions.

4. In his poems A. Martirosyan presents the themes of patriotism, love, existence, transient and permanent, reality and cosmic, life and death through new approaches, seeks unexplored territories, creates his planet, and populates it with individuals seeking self-purification, who has their own worries and concerns in the context of dramatic feelings and dreams.

5. On his planet of love and kindness, the poet connects different streams of time in a common chain, where the past rests in the present, and the future is presented in the same connection with the past and the present. Within the "open", "closed" frames of time, A. Martirosyan traces the course of time, looking to the Middle Ages.

Preserving the traditional structure of sharakan, A. Martirosyan places modern poems on its pedestal, the whole of which, based on internal logic, he calls "Sharaknots". At the core of the series is the path of self-purification, being closer to God, the one who is lost between heaven and hell, goes to the Kingdom and sends the message of God to sinful souls.

Both in "Sharaknots", and in the rest of the poems, the poet presents the image of our country at the end of the 20th century, which has not changed much in its content.

6. A. Martirosyan experiments with different forms of poem structure, classical-traditional and not rhymed, looking for new words by combining different rhythmic units, presenting them with new nuances of the colour system. Many of his poems have plot, knots and ways to untie them, stylistic originality.

7. Starting from the collection "Birds" and going to collections "Worship" and "Forbidden Fruit" A. Matirosyan created a complete and perfect system with its own internal regularities and stages of progress.

Especially the collections of his second period are notable for their stylistic homogeneity, with unique lyrical and epic combinations of the story, stingy use of words, enriching the "plan" of traditional poetry with new details, tending to add new nuances to its "front" rather than making some "cosmetic changes".